ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» փետրվարի 2019թ. N 6

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի № 46-ն որոշման, սահմանված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման նպատակով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 24.01.2019 թվականի № 7 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանով ս/թ փետրվարի 27-ին Բուրաստան համայնքում կազմակերպել և անցկացնել շտաբային ուսումնավարժություն. «Ազատի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում ԲՊ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը» թեմայով:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

1. «Ազատի ջրամբարի պատվարի փլուզման փլուզման սպառնալիքի դեպքում ԲՊ միջոցառումների կազմակերպումը և իրականացումը»:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Կատարելագործել համայնքի ղեկավար կազմի ունակությունները ԱԻ կանխման և համագործակցության միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:

2. Ստուգել համայնքի կազմավորումների պատրաստականությունը արտակարգ իրավիճակներում:

ՈՒսումնասիրության անցկացնելու վայրը՝ Բուրաստանի համայնքապետարան:

ՈՒսումնավարժությունը արձյունավետ կազմակերպելու և անցկացնելու նպատակով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Շտաբային ուսումնավարժությանը ներգրավել համայնքի ղեկավար կազմին, ՔՊ կազմավորումներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՇՏԱԲԻ ՊԵՏԻՆ՝

1. Կազմել ուսումնավարժության նախապատրաստման օրացույցային պլանը և ներկայացնել իմ հաստատմանը մինչև փետրվարի 15 - ը:

2. Ծանոթացնել պլանով նախատեսված միջոցառումների բովանդակությանը բոլոր մասնակիցներին և ապահովել նրա լրիվ կատարումը:

3. Կազմել ուսումնավարժության անցկացման պլանը, մտահղացումը, բացատրագիրը և մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ու ներկայացնել իմ հաստատմանը մինչև 22.02.2019թ.:

4. ՈՒսումնավարժության մասնակիցների հետ անցկացնել պարապմունքներ ուսումնավարժության միջոցառումների հարցերի կատարման վերաբերյալ:

5. Պարբերաբար զեկուցել ինձ օրացույցային պլանի միջոցառումների կազմակերպման մասին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի շտաբի պետի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ա.ԹԱՐԿԵՐԴՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» փետրվարի 2019թ. N 7

«ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ» -Ի ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՆՎԵՐՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետի , 46-րդ հոդվածի դրույթներով և միաժամանակ հիմք ընդունելով համայնքի ավագանու 17.01.2019թ. թիվ 2-Ն որոշման 2-րդ մասի 3-րդ կետի պահանջը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.<<Տյառնընդառաջ>> - ի միջոցառման կազմակերպման և համայնքի նորապսակ և տարեց / ոսկյա հարսանիք նշող / զույգերին նվերների բաշխման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Վաչիկ Աղաջանյան –հանձնաժողովի նախագահ ,համայնքի ղեկավարի տեղակալ
2. Էվելինա Ղազարյան – հանձնաժողովի անդամ,աշխատակազմի քարտուղար
3. Մարիամ Գեղամյան - հանձնաժողովի անդամ, գլխավոր մասնագետ
4. Մարիամ Միրզոյան - հանձնաժողովի անդամ, մշակույթի, սպորտի և կրթության հարցերով պատասխանատու ,
5. Մարգարիտա Հարությունյան- հանձնաժողովի անդամ, գործավար
6. Սիլվա Մանուկյան - հանձնաժողովի անդամ, գրադարանի վարիչ
7. Աննա Հովհաննիսյան – հանձնաժողովի անդամ, օպերատոր
8. Ամատունի Գրիգորյան - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ
9. Ալբերտ Հովհաննիսյան - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ

2.<<Տյառնընդառաջ>>- ի միջոցառումն անցկացնել փետրվարի 13-ին, ժամը 13.^{00}-ին, առային մասը համայնքի <<Սուրբ Հակոբ>> եկեղեցում , երկրորդ մասը՝ մշակույթի տան բակում:

3.<< Տյառնընդառաջ>>-ի միջոցառման կազմակերպման և համայնքի նորապսակ և տարեց զույգերին նվերների գնման համար համայնքի բյուջեից հատկացնել 208 000 / երկու հարյուր ութ հազար / դրամ գումար, որից՝

- 197000 / հարյուր իննսունյոթ հազար/ դրամ փոխանցել Ա/Ձ Նունե Դավթյանին՝ նվերների ձեռքբերման համար
- 11000 /տասնմեկ հազար/ դրամ Ա/Ձ Ալիանա Համբարձումյանին միջոցառման կազմակերպման համար:

4. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Վաչիկ Աղաջանյանի վրա :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ա.ԹԱՐԿԵՐԴՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բուրաստան համայնք
հեռ. 077101869, e-mail: burastan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
<< 14>>փետրվար 2019թ. N 8

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԿՈՍՏՅԱ ՑՈԼԱԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, միաժամանակ հաշվի առնելով համայնքի ընտանիքների սոցիալական ապահովվածության հարցերով զբաղվող հանձնաժողովի 12.02.2019թ. եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կոստյա Ցոլակի Պետրոսյանին / ծնվ. 1991թ. / համայնքի բյուջեից հատկացնել հուղարկավորության նպաստ 50000 / հիսուն հազար / դրամի չափով, դստեր՝ Արմինե Կոստյայի Պետրոսյանի / ծնվ. 2016թ./ թաղման ծախսերը հոգալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / Ա.ԹԱՐԿԵՐՈՂՅԱՆ